սառած թեւերով վայր ընկնում բակերի աղբի մէջ: Նրանք ապրում են մեր ճակատագիրը մեզանից աւելի ներուժօրէն, եւ մեր ենթագիտակցութեան մէջ կատարուող դրաման նրանք վեր են ածում փողոցային խաղի, անդիմադրելի ընդվզումի ըմբոստացման...

Երախաները ամբողջ իրենց էութեամբ, զգում են գալիք դէպքերը: Երկրաշարժային գործիքների նման, նրանց անձը նախազգում է ճակատագրի ոտնաձայնը: Նրանց միամտութեան մէջ մոգական մի ուժ կայ, տեսանողի կարողութիւն, ու նրանք անհանդիստ են դընչների նման: Ցիշատակներիս դիշերուան մէջ քանի քանի՛ մանկական նայուածքներ են վառվռում հեռաւոր ատղերի նման:

Մեծ քաղաքների արուարձաններում տեսած մանուկներ, դունաթափ, դեղնած շրթունքներով, դողահար մարմնով: Մուրացող տղաները, ծերուկ կոյրերի մօտ կանգնած: Մեր որբերը...

* * *

Մոմը մարել ենք, պառկել:

Ածուխի դէմքով երկինքը ճակատը պատուհանին է կպցրել:

Ամէն ինչ փակ է: Ամէն բանի շուրջ՝ անողոք մի սահման: Հարեւան սենեակներից խրոփոցի ձայներ են գալիս: Շուրջս հանդիստ քնել են: Փոքրիկ աղջիկս շնչառութիւնը մի քիչ դժուար է առնում, ծանր, անկանոն... Ուշադրութիւն չեմ դարձնում:

Աշխատում եմ աչքերս փակել: Քուն չկայ:

Օդը ծանր է, թանձր:

Հազար տեսակ մտքեր: Մարդ եթէ կարողանար գրի առնել ուղեղի մէջ անցնող բոլոր պատկերները եւ մտքերը... Գանկիս ետեւը ծանր կապարի նման է: Գլուխս խորտակւում է մի ինչ որ անդունդ: Վախեցած, բարձրանում եմ ու նորից պառկում, նորից փորձ անում քընելու:

Սիրտս կատուներ են ճանգում: Լոյսի արագութեամբ, սրընթաց, պատկերները մէկը միւսի ետեւից վազում են: Տիեզերքը հոլի նըման պտտում է, տարածութիւնների մէջ անտառներ են վառւում, չտեսնուած կենդանիներ, վարի պառաւ կինը, վհուկները եկել են վանքի մէջ պատարագ են մատուցում...

Կէս արթուն եմ: Ամէն բան յիշում եմ: Գիտակցութիւնս բոլորովին թմրած չէ:

Երկրագունդը անորոշ վիճակի մէջ է: Հսկայ շառաչով ջուրերը թափւում են, խառնւում, գլոր գալիս: Կատարեալ մի քաոս: Ոչ ծառ կայ, ոչ կենդանի, ոչ լեռ, ոչ դաշտ: Ականջներիս մէջ մի տեսակ խշշանք: Ահագին ջրվէժներ ոռնալով վայր են ընկնում, սեւ ջուրերը լիճերի մէջ պտոյտ են գալիս, եռում, եփում, շոգիանում: Պատուհանը բացուել է եւ դիշերը՝ սեւ տարածութիւն՝ մատերի վրայ, դդուշօրէն մոտ է գալիս: Անտանելի մի հոտ: Շնչառութիւնս դժուարանում է: Ցեխերի հրոկայ կոյտեր, եռալով, թափւում են, գլոր գալիս, ընկնում անդունդների մէջ: Այս քաոսի մէջ շատ փոքրիկ մի լոյս, հազիւ նշմարելի, կայծկլտում է: Մտածում եմ, առաջի հիւլէն է: Ինչպիսի՛ ջանք է անում ապրելու համար: Երկրագունդի բոլոր կոյր ուժերը նրա դէմ են: Լեռնաշղթաները, ովկիանները, դեռ խառն, անորոշ վիճակի մէջ, թաւալւում են, գրոհ տալիս, դարնւում, ճեղքւում տարածութիւնների մէջ, եւ հիւլէն ճիգ է անում ապրելու, դիշերուան դէմ դիմադրում է իր կայծը, իր ապրելու կամքը, իր կարելիութիւնների անվերջանալի զօրութիւնը:

Ամպերի նման տարածութիւնները սկըսում են շարժուել: Մոխրագոյն կոյտեր են լողում: Ծուխի ալիքներ են բարձրանում: Գըլուխս երկաթի նման ծանր է: Ուժ եմ անում արթնանալ՝ անկարող եմ: Շունչս բոլորովին կտրւում է: Ականջիս մէջ, խզուած կոկորդներ խռպում են, անքում...մորթուած եղի թոքերը շարունակում են ծանր շնչել ու ամէն անգամ, երբ չունչ են առնում, ամպերը երերում են, եւ հիւլէն սկսում է արագօրէն շարժուել, փողոցում տեսած մի դժբախտ երախայի աչքերի նման...

Արթնանում եմ: Ամբողջ ընտանիքս արթնացած բոլորուել է փոքրիկ աղջկանս շուրջը, որը չի կարողանում շնչել: «Մեռնիլ չեմ ուզում», ասում է, «մեռնիլ չեմ ուզում»...

Դուռը բաց եմ անում, եւ դիշերը ապականուած իր շունչը ներս է բերում: Մոմ եմ վառում, հագւում եմ: Ո՞ւր գնամ, ո՞ւմ կանչեմ: Երախաներս, չոքել են անկողինների վրայ եւ, բոմանտիկ նկարների սրտաճմլիկ տե-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան